**ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ*

Harutyunyannarine899@gmail.com

0009-0006-2073-1283

DOI: 10.54503/1829-4073-2025.3.97-112

# ԱՐՓԻԱՐՅԱՆ-ՀԱՅԿԱԿԸ «ՄՇԱԿ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

***Ամփոփում***

Արփիար Արփիարյանի հրապարակախոսությունը համահունչ է «Մշակ»-ի գաղափարներին և պատահական չէ, որ նա թերթին աշխատակցել է Գրիգոր Արծրունու հրավերով և Մկրտիչ Փորթուգալյանի առաջարկությամբ: Հարություն Սվաճյանից ու Միքայել Նալբանդյանից հետո նա դարձավ կապող օղակ արևմտահայ և արևելահայ մտավորականության միջև: Ա. Արփիարյանն առաջինն էր, որ հանգամանորեն ներկայացրեց Կ. Պոլսի պատրիարքարանի և Ազգային ժողովի գործունեությունը: Նա ունի յուրօրինակ հրապարակախոսություն, քաջատեղյակ է եվրոպական մամուլին և լրագրությանը, ինչի շնորհիվ թարմ հոսանք է բերում արևմտահայ մամուլի և հրապարակախոսության մեջ: Արծրունին բարձր է գնահատում նրա տաղանդը և առանձնացնում նրան որպես ժողովրդի կյանքին մոտ կանգնած ու նրա պահանջմունքները արտահայտող հրապարակախոսի: Իր դեմոկրատական գաղափարներով Արփիարյանը ժողովրդականացնում էր նաև «Մշակ»-ի գաղափարական ընթացքը:

**Բանալի բառեր՝** *Արփիար Արփիարյան, Հայկակ, «Մշակ», Հայկական հարց, հայկական բարենորոգումներ, ազգային ինքնօգնություն, կրթական ընկերություններ:*

***Ներածություն***

XIX դ. վերջին տասնամյակներին Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արևմտահայության վիճակի հետագա վատթարացման և

* *Հոդվածը ներկայացվել է 25.11.25, գրախոսվել է 04.12.25, ընդունվել է տպագրության 19.12.2025:*

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

Հայկական հարցի միջազգայնացման պայմաններում նոր թափ է ստանում հայ ազգային-ազատագրական պայքարը: 1870–1880-ական թթ. ինչպես Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության այլ տարածքներում, այնպես էլ օսմանյան տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում ձևավորվում են բազմաթիվ ազատագրական կազմակերպություններ ու խմբակներ, որոնց հիմնական նպատակը հայ ժողովրդի ազատագրությունն էր սոցիալական ու քաղաքական ճնշումներից: Կարևոր է ընդգծել, որ այդ կազմակերպությունների գերակշիռ մասը գերակայություն էր տալիս արևմտահայության հարցին:[1] 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայ ազգային կազմակերպությունների և գաղափարական խմբակների անդամները Արևմտյան Հայաստանի ապագան պատկերացնում էին Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածի տեսքով, ըստ որի՝ «Բարձրագույն դուռը պարտավորվում է անհապաղ իրականացնել բարենորոգումներ հայերով բնակեցված գավառներում՝ ելնելով տեղական պահանջներից և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Ըստ վերոհիշյալ դրույթի՝ Բ. դուռը պարտավորվում էր նաև պարբերաբար հաշվետու լինել բարենորոգումների ընթացքի վերաբերյալ այն պետություններին, որոնք պետք է հսկողություն սահմանեին դրանց իրականացման վրա»:[2] Այնուամենայնիվ, գործնականում բարեփոխումները ձախողվեցին. դրանք վերածվեցին քաղաքական պատրանքի, իսկ արտաքին ուժերից սպասված աջակցությունը՝ խաբուսիկ հույսի: Արևմտյան Հայաստանում կացությունը վատթարանում էր, որը հասցնելու էր 1890-ականի կոտորածներին:

Միջազգային իրավունքի առարկա դարձած Հայկական հարցի հետ կապված քաղաքական ու գաղափարական իրողությունները նոր ուղղություն և հուն տվեցին թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ մամուլին ու հրապարակախոսությանը: Այս տասնամյակից սկսած՝ լրագրությունը սկսեց ավելի լրջորեն և խորությամբ ուսումնասիրել ազգային իրականությունը, ինչպես նաև ժողովրդի գոյատևման և օսմանյան իշխանությունների սաստկացրած բռնություններին դիմակայելու հնարավորությունները: Հայ քաղաքական մտքի օրակարգ էր մտնում այն մտայնությունը, որ արևմտահայության ազատագրությունը թուրքական դարավոր բռնապետության լծից հնարավոր է միմիայն համաժողովրդական ապստամբության միջոցով: Ազգային ուժերի միավորման և

[1] Մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան** 1965:

[2] **ԼԷՈ** 1915, 110:

ազատագրական պայքարի գաղափարախոսություն ստեղծելու անհրաժեշտությունը դարձավ այդ ժամանակաշրջանի մտավոր գործիչների, ինչպես նաև մամուլի և հատկապես Ա. Արփիարյանի հրապարակախոսության առաջնային խնդիրը:

***Արփիարյան-Հայկակի հրապարակախոսությունը «Մշակ»-ում***

Բեռլինի վեհաժողովից առաջ և հատկապես դրան հետևող տասնամյակներին Արփիարյանն իր թղթակցական նյութը վերլուծում է հիմնականում երկու հիմնահարցերի շրջանակներում՝ պոլսահայ ազգային և հանրային կյանքի ու գործիչների գործողությունների լուսաբանումներով, ապա դրանց հետ սերտորեն կապված՝ Արևմտահայաստանի և Հայկական հարցի հանգամանալի քննությամբ:[3] Նրա 1878–1880 թթ. հրապարակախոսության առանցքում դրված էր Բեռլինի վեհաժողովից հետո սկսված բարենորոգումների գործընթացի նկատմամբ խոր անվստահությունը:

Բեռլինի կոնգրեսը ցույց տվեց, որ այդ պատկերացումները իրական որևէ հիմք չունեն, որովհետև գործնականում պարզ դարձավ մեծ տերությունների շահադիտական վերաբերմունքը արևմտահայերի հանդեպ: Արփիարյանը հետևողականորեն արձագանքեց այս իրողությանը՝ այն դիտարկելով որպես Հայկական հարցի լուծման քաղաքական փակուղի: Նրա համոզմամբ՝ այդ փակուղին ոչ միայն բացահայտեց եվրոպական դիվանագիտության անպտուղ բնույթը, այլև ծանր հետևանքներ ունեցավ արևմտահայ իրականության համար, որն ուղեկցվեց բռնությունների և հարստահարությունների նոր ալիքով: Այս գնահատականը հատկապես նկատելի է 1878 թ. նոյեմբերի 16-ի թղթակցությունում (տպագրվել է «Մշակի», նոյեմբերի 29-ի թվահամարում), որտեղ նշվում էր. «Ահաւասիկ ինչ որ շահեցանք առ այժմ Բերլինի վեհաժողովէն, – Զէյթունի գերութիւնը և աւերումը, Հայաստանի հարստահարութեանց բազմապատկումը»:[4]

Այս դիտարկումը վկայում է, որ դիվանագիտական հույսերը ոչ միայն չարդարացան, այլև ճանապարհ հարթեցին նոր բռնությունների և հիասթափությունների համար: Նման պայմաններում առավել ընդգծված նշանակութ-

[3] **Խառատյան** 2021, Արփիարյանը Մշակի թղթակից, Գեղամ Հովհաննիսյան, Սուրեն Սարգսյան (խմբ.) Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170-ամյակներին նվիրված Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 4:

[4] «Մշակ», № 206, 29.11.1878:

յուն ստացան Արփիարյանի՝ «Հայկակ» ստորագրությամբ հրապարակումները: Հայկական հարցի փակուղին Արփիարյանի համար դարձավ գաղափարական մեկնակետ, որտեղ ինքնօգնության սկզբունքը ձևավորվեց որպես ազգային փրկության, ներքին ինքնակազմակերպման և քաղաքական ինքնագործունեության հիմնարար դրույթ:

Այդ վերագնահատման արդյունքում նրա թղթակցությունները այլևս չսահմանափակվեցին բարենորոգումների ձախողման արձագանքով. դրանցում սկսեցին ձևավորվել և համակարգվել ազգային ինքնագիտակցության զարթոնքի ու ներքին ինքնակազմակերպման խնդիրները: Վերջիններս հանդես էին գալիս որպես գիտակցված պատասխան Հայկական հարցի քաղաքական անգործունակությանը և միջազգային դիվանագիտության ստեղծած փակուղուն՝ շեշտադրելով ինքնօգնության և սեփական ներուժի վրա հիմնված զարգացման անհրաժեշտությունը:

Սույն փուլում՝ 1870-ականի վերջերին Արփիարյանի հրապարակախոսությունը վերաճեց քաղաքական մտքի համակարգված դրսևորման: Այս գաղափարական շրջադարձը վճռորոշ եղավ նրա կերպարի ձևավորման համար՝ որպես քաղաքական գործչի, որի հետագա գաղափարական և գործնական դրսևորումները հիմնվեցին որոշակի կողմնորոշումների վրա:

Արփիարյանի գործունեությունը «Մշակի» թղթակցի կարգավիճակում ստացավ առանձնահատուկ նշանակություն. նա դարձավ այն կարևոր օղակը, որը միավորեց արևմտահայության ազգային մտահոգություններով զբաղվող կառույցներն ու անհատներին և միաժամանակ ներգրավեց արևելահայությանը համազգային շարժման դաշտում՝ ստեղծելով նոր որակի հաղորդակցություն: Այդ առումով «Մշակի» էջերում նրա հրապարակագրական գործունեությունը շաղկապելու էր ավելի ուշ՝ 1880-ական թթ. «Արևելք» և «Մասիս» պարբերականներում ձևակերպված այն հիմնարար մտքի հետ, ըստ որի՝ արևելահայ ընթերցողին անհրաժեշտ էր ներկայացնել արևմտահայ կյանքի իրական և հրատապ խնդիրները՝ նպաստելով դրանց համազգային ընկալմանն ու լուծմանը:

Դառնալով յուրահատուկ կամուրջ երկու հատվածների միջև, Արփիարյանը նշանակալիորեն նպաստեց արևելահայ մամուլում «նոր լրագրության» սկզբունքների արմատավորմանը՝ դրանում ներմուծելով դիվանագիտական սթափ վերլուծություն, քաղաքական հղկվածություն և արդիական ազգային օրակարգ: Այդ ազդեցությունն ընդգծում է նաև Հակոբ Օշականը՝ նկատելով, որ «Մշակում» տպագրված Արփիարյանի քրոնիկները «թերևս մուտք կը կազ-

մեն մեր նոր պատմության մեջ»՝ հանդես գալով որպես արևելահայ քաղաքական մտքի զարգացման հիմնասյուն[5]: Նույնն է փաստում նաև Լաուրա Մուրադյանը՝ ընդգծելով, որ Արփիարյանը ոչ միայն արևմտահայ ազատագրական ձգտումների սկզբնաղբյուրն էր, այլև դրանց գաղափարական մեկնաբանը՝ ձևակերպելով ինքնակազմակերպման ու համազգային գործակցության ռազմավարություն:[6]

Արփիարյանի քաղաքական և հրապարակախոսական գործունեության առանցքային ուղղություններից էր արևմտահայ ազգային կյանքի հիմնախնդիրների լուսաբանումը: Իր «Հայկակ» ստորագրությամբ թղթակցություններում նա հետևողականորեն քննադատում էր ոչ միայն Պատրիարքարանի և Ազգային ժողովի գործունեության ձևականությունը, այլև Բարձր Դռան քաղաքականությունը՝ բացահայտելով վերջինիս ուղղվածությունը ազգային ինքնավարության կործանման նկատմամբ: Արփիարյանը խստորեն դատապարտում էր պոլսահայ վերնախավի ստրկամտությունն ու հաշտվողականությունը, ինչպես նաև հոգևորականության շրջանում արմատացած անտարբերությունն ու շահախնդրությունը: Նրա բնորոշմամբ՝ ազգային-եկեղեցական կառույցները վերածվել էին ինքնապահպանմանն ուղղված, իրական ազդեցությունից զուրկ մարմինների: Այդ գաղափարական համատեքստում նա ընդգծում էր. «Իսկ մեք ինչ կընեմք, մեք որ ալ Տաճկաստանի կործանումը իբր ստուգութիւն ընդունած ենք... և Էջմիածին՝ անհոգ հանդիսատես է Հայաստանի չարչարանաց»:[7]

Այսպիսով, արտաքին օգնությունը քաղաքական utopie[8] համարելով և ներքին ինստիտուցիոնալ ճգնաժամը լուսաբանելով՝ Արփիարյանը հանգում է այն եզրակացությանը, որ ազգային գոյության և ազատագրության միակ իրատեսական ուղին ինքնօգնության սկզբունքն է: «Ինքնօգնութիւն՝ ահա մեր նշանաբանը»[9] ձևակերպումը ստանում է ոչ միայն մարտավարական, այլև գաղափարական նշանակություն:

Արփիարյանի ինքնօգնության հայեցակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Կ. Պոլսի հասարակական և կրթական ընկերությունների մա-

---

[5] **Սողոմոնյան Գ.,** Արփիար Արփիարյանը՝ «Մշակ»-ի թղթակից, Արփիար Արփիարյանը՝ «Մշակ»-ի թղթակից - Pan-Armenian Digital Library

[6] Մուրադյան 1991, 68–69:

[7] «Մշակ», № 1, 16.01.1879:

[8] Տե՛ս «Մշակ», № 69, 9.05.1879, «Մշակ», № 28, 22.02.1880:

[9] «Մշակ», № 71, 12.05.1879:

սին տեղեկությունները, ինքն էլ լինելով այդ ընկերությունների կազմակերպման, հետագայում՝ Գր. Արծրունու հորդորներով, դրանց միավորման և գործունեության նախաձեռնողներից մեկը: Այդ ընկերությունները Արփիարյանը դիտարկում էր որպես ազգային գիտակցության արթնացման հիմնասյուներ: Դրանց թվում նա հիշատակում է «Վարժապետական միությունը»,[10] «Ուսումնասիրաց ընկերութիւնը», «Դպրոցասիրաց-Արևելեան ընկերութիւնը», «Ասիական ընկերութիւնը», «Միութիւն Մանկանց ընկերութիւնը»[11] և առավելապես՝ «Արարատեան ընկերությունը»: Այս կառույցները ոչ միայն զբաղվում էին դպրոցների հիմնմամբ և կրթության տարածմամբ, այլև նպաստում էին ազգային ինքնակազմակերպման, սոցիալական համերաշխության և բարոյական ինքնաճանաչման գաղափարների զարգացմանը:

Արփիարյանի հասարակական-քաղաքական մտածողության առանցքային դրույթներից մեկն այն համոզմունքն էր, որ ազգային փրկությունն ու զարգացման հեռանկարը պետք է հիմնված լինեն ոչ թե արտաքին միջամտությունների, այլ ներքին կազմակերպվածության, կրթության և նյութական բարեկեցության վրա: Այս տեսլականի գործնական մարմնավորումը նա տեսնում էր հասարակական կառույցների կայացման մեջ, որոնց օրինակներից ամենավառը «Արարատեան ընկերությունն» էր: Վերջինիս հիմնական առաքելությունը գյուղացիական դասի կրթական մակարդակի բարձրացումն էր, մինչդեռ «Հայկական ընդհանուր ընկերությունը» միտված էր նրանց տնտեսական դրության բարելավմանը: Արփիարյանը հետևողականորեն ընդգծում էր այդ երկու ուղղությունների՝ կրթական և տնտեսական ինքնակազմակերպման փոխլրացնող բնույթը՝ նշելով, որ դրանց համադրումը «մեծապէս կը նպաստի Հայաստանի փրկութեան»:[12]

Արփիարյանի հայեցակարգում «Արարատեան ընկերությունը» հանդես է գալիս ոչ միայն որպես կրթական նախաձեռնություն, այլև որպես կենսունակ մարմին, որի գործունեությունը հիմնված էր կառավարչական կարգապահության, կոլեկտիվ պատասխանատվության և հստակ ազգային նպատակադրման վրա: Ընկերությունը միավորում էր կրթական և մշակութային խնդիրները, ձգտում էր ապահովել միջազգային ճանաչում, հենվում էր չեզոք պետությունների հովանավորության վրա և փաստացի լրացնում էր այն բացը, որն ա-

[10] «Մշակ», № 196, 14.11.1878:
[11] «Մշակ», № 1, 16.01.1879:
[12] «Մշակ», № 196, 14.11.1878:

ռաջացել էր պետական ու եկեղեցական կառույցների անբավարար պայմաններում: Միաժամանակ Արփիարյանը շեշտում էր «Արարատեան ընկերության» գործելակերպի խոհեմ և հաշվենկատ բնույթը՝ նկատելով, որ այն «թէ-պէտ աներկիւղ, այլ մեծ խոհեմութեամբ կաշխատի»:[13] Այս դրույթը ցույց է տալիս, որ ընկերության ռազմավարությունը կառուցված էր ոչ թե բացահայտ առճակատման, այլ քաղաքականապես հավասարակշռված ինքնակազմակերպման տրամաբանության վրա: Նրա ընկալմամբ ընկերությունը ներկայացնում էր ազգային ինքնակազմակերպման նոր որակ, որն ուղղված էր միաժամանակ թե՛ ներքին կրթական զարգացմանը, թե՛ արտաքին ճանաչման ապահովմանը: Եթե եվրոպական քաղաքական-մշակութային շրջանակներում մինչ այդ «յոյներն միայն կը նկատուէին իբր Արևելից քաղաքակրթիչ» տարր, ապա «Արարատեան ընկերության» նպատակն էր «չը թողել, որ Արևելից քաղաքակրթիչ միայն յոյներն նկատուին»[14]:

Այս համատեքստում առանձնակի նշանակություն ունի ընկերության դիմումը Ֆրանսիայի դեսպան Ֆուրնիեին՝ հովանավորություն ստանալու ակնկալիքով: Արփիարյանն ընդգծում է, որ ընկերությունը գիտակցաբար հրաժարվել է դիմել թե՛ ռուսական, թե՛ բրիտանական դիվանագիտական ներկայացուցչություններին՝ նշելով. «Ընկերութիւնը չէր կրնար Ռուսիոյ վսեմափայլ դեսպանին պաշտպանութիւնը խնդրել… չուզեց նաև Անգղիոյ դեսպանին դիմել… հետևաբար չէզոք տէրութեան մը դիմելն ամենէն աւելի քաղաքագիտականն էր»:[15] Այս դիվանագիտական հաշվարկը վկայում է Արփիարյանի իրատեսական քաղաքական մտածողության մասին, համաձայն որի՝ ազգային շարժման առաջընթացը պետք է հիմնվի ներքին նախաձեռնությունների վրա, սակայն միևնույն ժամանակ պետք է ուղեկցվի խելամիտ արտաքին կապերով:

Արփիարյանի ընկալմամբ «Արարատեան ընկերությունը» մարմնավորում էր քաղաքացիական նոր մոդել, որի միջոցով հայ հասարակությունը փորձում էր պահպանել և զարգացնել իր մշակութային ինքնությունը՝ պետական ճնշումների ու վերահսկողության պայմաններում: Ազգային ներկայացումների արգելման փաստը և դրա դիմաց Արարատեան ընկերության հասարակական նախաձեռնությունների աշխուժացումը նա դիտարկում էր որպես ազգա-

[13] «Մշակ», № 17, 7.02.1879:
[14] «Մշակ», № 17, 7.02.1879:
[15] «Մշակ», № 17, 7.02.1879:

յին ինքնակազմակերպման փոխկապակցված դրսևորումներ, որոնցում վարչական ճնշումը տեղի էր տալիս դիմադրության և նոր նախաձեռնությունների ծնունդի:

Այսպիսով, Արփիարյանը «Արարատեան ընկերության» գործունեությունը ներկայացնում է որպես ազգային ինքնակազմակերպման պատմական նախադեպ: Նրա բնորոշմամբ՝ «Երբ հայ ազգն Արարատեանի նման զաւակներ ունի, նորա փրկութիւնը անտարակոյս է»,[16] որով ինքնակազմակերպման գաղափարը հաստատվում է ոչ միայն որպես գաղափարախոսական սկզբունք, այլ որպես ազգային գոյատևման և վերածնության ռազմավարական հիմք:

Արփիարյանի քաղաքական և հասարակական հայեցակարգում եկեղեցին ընկալվում է ոչ միայն որպես հոգևոր կենտրոն, այլև որպես ազգային ինքնապահպանության ակտիվ դերակատար: Նրա թղթակցությունները արտահայտում են մտահոգություն եկեղեցական վերնախավի պասիվության վերաբերյալ, որը նա դիտարկում էր որպես համակարգային թերացում, հատկապես ազգային ճգնաժամերի պայմաններում: Արփիարյանի վերլուծության կարևորագույն ուղղություններից մեկը Էջմիածնի դերի վերաիմաստավորումն էր. նրա համոզմամբ, գերագույն հոգևոր-ազգային ինստիտուտը չէր կարող սահմանափակվել միայն դիտորդական գործունեությամբ, այլ պարտավոր էր անմիջականորեն ներգրավվել ժողովրդի կենսական խնդիրների լուծման գործընթացում:

Արփիարյանը հորդորում էր Կաթողիկոսին ուշադրություն դարձնել «Հայաստանի տարաբաղդ վիճակին»՝ ընդգծելով, որ «Նորին Վեհ. Հայրապետին աններելի է անտարբեր նստել, նրա պարտքն է իր ժողովուրդի վիճակի վրա ստոյգ տեղեկութիւն ունենալ»[17]: Այս դիրքորոշմամբ նա հստակ ձևակերպում է եկեղեցուց պահանջվող գործնական ներգրավվածության չափանիշները՝ առանձին ուշադրություն դարձնելով ոչ խորհրդանշական, այլ արդյունավետ մասնակցությանը ազգային հարցերում: Արփիարյանը նշում է նաև հավատացյալների ունեցած պատմական ակնկալիքները Ս. Էջմիածնի նկատմամբ. «Մենք, իբր հայ, սրտագին կը փափագիմք, որ ամեն հայեր սիրեն, յարգեն Էջմիածին, և անձնուէր հոգի ունենան Հայաստանեայց մեծարելի Հայրապետին նկատմամբ, զի այս կը պահանջէ ազգի շահերն»[18]: Այս արտահայտութ-

[16] «Մշակ», № 63, 1.05.1879:
[17] «Մշակ», № 193, 9.11.1878:
[18] «Մշակ», № 33, 6.03.1879:

յունը վկայում է, որ ազգային հարգանքը եկեղեցական ինստիտուտի նկատմամբ պայմանավորված է ոչ թե պատմական հեղինակությամբ, այլ իրական և գործնական դերակատարությամբ:

Արփիարյանի հայեցակարգում առաջնային «կենսական խնդիրն» ընկալվում էր կրթության կազմակերպումը, որն ապահովելու էր ողջ արևմտահայության գոյատևումը. «Այսօր հայ ժողովուրդի ամենէն էական խնդիրներէն մին դաստիարակութեան խնդիրն է»: Նրա գնահատմամբ, նույնիսկ անուղղակի աջակցությունը կրթական հաստատություններին նշանակալից դեր ուներ՝ ամրապնդելով հանրային վստահությունն ու հավատը Ս. Էջմիածնի նկատմամբ. «Ուստի եթէ Նորին Վեհափառութիւնը Արարատեան վարժարանաց ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստամատոյց լինի, անշուշտ ժողովուրդը մեծապէս շնորհակալ պիտի լինի»:[19]

Արփիարյանի քննադատությունը անհատական բնույթ չի կրում, այն ուղղված Ս. Էջմիածնի դերի վերահմաստավորմանը և ազգային ինքնապահպանության գործընթացներում նրա արդյունավետության բարձրացմանը: Նրա հայեցակարգը ընդգծում է, որ հոգևոր կենտրոնի արդյունավետությունը ամբողջությամբ կապված է ազգային նպատակների հետ և պահանջում է գործնական ներգրավվածություն կրթության, մշակույթի և քաղաքացիական գործունեության ոլորտներում:

Այսպիսով, Արփիարյանի մոտեցումը ներկայացնում է համապարփակ հայեցակարգ, որտեղ հոգևոր և քաղաքացիական պարտականությունները հանգում են ազգային ինքնապահպանության նպատակների իրականացմանը: Նրա դիտարկումները ցույց են տալիս, որ եկեղեցին պետք է հանդես գա ոչ միայն որպես հոգևոր կենտրոն, այլև ազգային գոյատևման և մշակութային զարգացման կարևոր կառույց, որի դերակատարությունը անհրաժեշտ է և՛ գործնական, և՛ ռազմավարական տեսանկյունից:

1879 թ. «Արարատյան», «Դպրոցասիրաց-Արևելյան» և «Կիլիկյան» ընկերությունների միավորման արդյունքում ստեղծվեց «Միացեալ ընկերութիւնք հայոց»-ը[20], որը դարձավ արևմտահայ կրթական-բարեսիրական շարժման եզակի դրսևորում: Արփիարյանի տեսլականում ազգային կրթական կազմակերպությունների միասնական և փոխլրացնող սկզբունքը ներկայացվում էր

[19] «Մշակ», № 33, 6.03.1879:

[20] **Լէօ,** 1905, 102:

որպես միակ արդյունավետ միջոց՝ հաղթահարելու ներքին ազգային ճգնաժամը:

Արփիարյանի հրապարակախոսական մտածողությունը ձևավորում է ազգային ինքնակազմակերպման հիմնարար քաղաքական տեսություն: Նրա համար հրապարակախոսությունը ոչ թե իրադարձությունների նկարագրություն է, այլ քաղաքական մտածողություն, որով հնարավոր է վերահիմաստավորել ազգային գոյության հիմնասյուները, վերանայել կառավարման ձևերը և հստակեցնել զարգացման ռազմավարությունը:

Նրա իքնօգնության հայեցակարգում կարևորվում է նաև ռազմավարական ներդրումների գաղափարը, որի արտացոլումը տեսնում ենք Մանուկ Մնակյանի՝ դպրոցաշինության համար հատկացրած 1000 օսմանյան լիրայի օրինակով, որը դիտարկում է ոչ թե որպես բարեգործություն, այլ որպես ներդրում՝ ուղղված ազգի գործնական ընթացքի ամրապնդմանը: Արփիարյանի մոտ դրամական օգնությունն արժեք է ստանում միայն այն դեպքում, երբ այն ծառայում է կրթական, կազմակերպական և մշակութային ենթակառուցվածքների զարգացմանը:

Նույն տրամաբանությամբ է մեկնաբանվում Խրիմյան Հայրիկի «զենքի քարոզը»: Արփիարյանը «զենքը» հասկանում է ոչ թե բառացի իմաստով, այլ որպես խորհրդանիշ, ինքնագիտակցության, ինքնապաշտպանության և ազգային ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու կամքի դրսևորում:

Արփիարյանի հրապարակախոսության մեջ նոր սերնդի առաջնորդ Մինաս Չերազի կերպարը ստանում է առանձնահատուկ քաղաքական նշանակություն: Նրա վերլուծություններում Չերազը հանդես է գալիս որպես նոր, արդիական առաջնորդության մոդելի խորհրդանիշ, որը պետք է փոխարիներ հին, հաշտվողական և անդեմ պոլսահայ վերնախավին: Արփիարյանի հայեցակարգով առաջնորդությունը կապված չէ պաշտոնական դիրքի հետ, այլ կախված է գաղափարական նախաձեռնողականությունից, կազմակերպչական կարողությունից և ազգային նպատակների բարոյական գիտակցումից:

Արփիարյանի մեկնաբանությամբ Ներսես Պատրիարքի հրաժարականը արձանագրում է, որ ազգային միտքը հասունացել է ներքին ռեսուրսների կազմակերպման և ազգի կարողությունների համախմբման վրա:

Բարձր Դռան քաղաքականությունը, ըստ Արփիարյանի, նպատակ ուներ կործանել Պատրիարքարանի ազգային ինքնությունը՝ սահմանափակելով եկեղեցական դատական իրավասությունները, պաշտոնազրկելով ու բանտարկելով ազգային գործիչներին, ինչպես նաև արգելելով ազգային թատրո-

նի գործունեությունը: Դրան ի պատասխան, Արփիարյանը կարևորում էր ժողովրդի տոկունությունը՝ գրելով, որ «Հայութիւնը տոկաց ամեն հալածանաց, պիտի տոկայ և յաղթականը պիտի տանի… աշխատել և համբերել»:[21]

Արփիարյանի հայեցակարգում կրթությունը դառնում է ազգային ինքնակազմակերպման առանցքային գործիք: Նա փաստում էր, որ գյուղացիական շերտերի ինքնաբուխ ջանքերը դպրոցների ստեղծման գործում վկայում են համայնքային համերաշխության և ազգային գիտակցության վերակենդանացման մասին: Վարդապետներն ու ուսուցիչները, ըստ Արփիարյանի, ներկայացնում էին ազգային հոգևոր վերածննդի հենասյունը. նրանց գործունեությունը՝ «լեռներն ու ձորերն թափառելով… վիրաւոր սրտերն կազդուրել»,[22] խորհրդանշում էր նվիրվածություն, ինքնազոհություն և ազգային հավատարմություն:

Նրա համոզմամբ՝ հասարակության կրթական և բարոյական պատրաստությունը նախապայման է գործնական մասնագիտությունների՝ երկրագործության,[23] արհեստագործության և տնտեսական գործունեության արդյունավետ զարգացման համար: Այս դրույթը տեղավորում է Արփիարյանին այն մտավորականների շարքում, որոնք կրթությունը դիտարկում էին որպես ազգային ինքնակազմակերպման քաղաքական նախադրյալ:

Արփիարյանը կարևորում էր նաև կանանց դերը՝ որպես համայնքային ինքնակազմակերպման իրական գործոն: «Դպրոցասէր հայուհեաց ընկերությունը» նրա համար օրինակ էր կարգապահության, լուսավորության և գործնական հայրենասիրության, որը զերծ է ցուցադրականությունից և փառասիրությունից: Այս նախաձեռնությունը խորհրդանշում էր, որ ազգային ինքնակազմակերպումը համընդհանուր գործընթաց է՝ ընդգրկելով ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց սոցիալական և կրթական ներուժը:

Պատմագրությունը դիտարկելով որպես ազգային ինքնագիտակցության և բարոյական դաստիարակության միջոց, նա բարձր էր գնահատում «Գրական միութեան[24]» գործունեությունը, որը նպաստում էր հայ մատենագրության տարածմանը և ընթերցանության մշակույթի ձևավորմանը: Նորայր Բիւզանդացու բառարանագրական աշխատանքը Արփիարյանը գնահատում էր

[21] «Մշակ», № 2, 17.01.1879:
[22] «Մշակ», № 71, 12.05.1879:
[23] «Մշակ», № 71, 12.05.1879:
[24] «Մշակ», № 77, 23.05.1879:

որպես լեզվագիտական նոր դռներ բացող, «մեծ պայքարներու և հեղափոխութեանց» սկիզբ դնող նախաձեռնություն[25]:

Պատմագրությունը, ըստ Արփիարյանի, պետք է լինի գիտական, անաչառ և աղբյուրահեն՝ ազատ նախապաշարմունքներից. «Պատմագիրը պարտավոր է բուն աղբիւրնէն ընտրել և խոհով և զգացմունքով յիշնալ այնպիսի կերպ, որ ընթերցողը հասկանա պատճառներն և կապակցութիւնը»:[26]

Նրա պատկերացմամբ՝ պատմությունը պետք է ներկայացնի ազգը որպես կենդանի բարոյական և քաղաքական ամբողջություն, ոչ թե որպես «մին անշարժ դիակ կամ լոկ պատկեր»: Այսպիսով, պատմագրությունը Արփիարյանի համար դառնում է ոչ միայն գիտական, այլև ազգային-կրթական առաքելություն՝ ուղղված ժողովրդի ինքնաճանաչմանն ու պատմական գիտակցության խորացմանը:

Արփիարյանի ներքին ինքնակազմակերպման հայեցակարգում մամուլն ու մտավորականությունը հանդես են գալիս որպես ազգային կյանքի ինքնուրույն կառավարման հիմնական աղբյուրներ: «Մշակ»-ը դառնում է հասարակական նախաձեռնություններն ուղղորդող հարթակ, իսկ Գրիգոր Արծրունին՝ «աղգասիրութեան և հաստատամտութեամբ»[27] օժտված առաջնորդի կերպար: Արփիարյանի պատկերացմամբ՝ ազգային առաջընթացը չի կարող իրականանալ վերևից պարտադրված բարենորոգումների միջոցով. այն արդյունք է ներքևից վեր բարձրացող՝ կրթված հասարակության, կազմակերպված մտավորականության և ժողովրդի համատեղ կամքի:

Արփիարյանը մամուլն ընկալում է ոչ միայն որպես տեղեկատու հարթակ, այլև որպես ազգային կյանքի կազմակերպիչ և վերահսկող միավոր: «Մշակ»-ը և Գրիգոր Արծրունին ներկայացվում են որպես հանրային միտքը կենտրոնացնողներ՝ մտավոր համակարգողներ, որոնք ուղղորդում են ազգային նախաձեռնությունները և ձևավորում հասարակական պատասխանատվության մշակույթ:

***Եզրակացություն***

Արփիարյանի ամբողջ տեսլականը կարելի է ձևակերպել մեկ հիմնարար թեզով՝ ազգային կյանքը պետք է ղեկավարվի հայ հասարակության ներքին

[25] «Մշակ», № 77, 23.05.1879:
[26] «Մշակ», № 78, 24.05.1879:
[27] «Մշակ», № 81, 29.05.1879:

ուժերով՝ կազմակերպված մամուլի, կրթության, ժողովրդական դիմադրողականության միջոցով:

Արփիարյանի համոզմամբ՝ կրթական, մշակութային և հասարակական շարժումները ազգային գոյության հոգեզավակ կառույցներն են, որոնք ձևավորում են ինքնակառավարվող հասարակություն: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում օսմանյան իշխանությունների կողմից մշակութային և կրթական սահմանափակումների քաղաքականությանը՝ ընդգծելով, որ ազգային ինքնապահպանման միակ ճանապարհը սեփական կրթական հաստատությունների, մամուլի և ընկերությունների զարգացումն է: Այսպիսով՝ Արփիարյանի ներքին ինքնակազմակերպման մոդելը միաժամանակ պատմական, բարոյական և քաղաքական ծրագիր է՝ ուղղված հայ հասարակության ինքնուրույն կենսագործունեությանը և հոգևոր ինքնիշխանությանը:

Արփիարյանի հրապարակախոսական գործունեության հասարակական արժեքը հիմնված էր Հայկական հարցի շուրջ ձևավորված համազգային պահանջների վրա: «Հայկակ» ստորագրությամբ հրապարակվող իր հոդվածներով նա ստեղծեց ինքնուրույն և համարձակ հրապարակախոսական մտածողություն, որն ուղղված էր արևմտահայ կյանքի հիմնահարցերի վերլուծությանը և դրանց գործնական լուծումներին:

Նրա թղթակցությունները առանձնանում են քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ, արևմտահայ համայնքի ներքին թերությունների խիզախ քննադատությամբ, ազատագրական ձգտումների զգայուն արձագանքմամբ և դիմադրական ոգին ամրապնդող առողջ և կառուցողական մոտեցմամբ:

Արփիարյանը հիմնավոր և համոզիչ կերպով ներկայացնում էր Կ. Պոլսի Ազգային ժողովի և Պատրիարքարանի գործունեության քննադատությունը, բարձրաձայնում էր արևմտահայ և արևելահայ հատվածների մերձեցման անհրաժեշտությունը և ընդգծում ազգային-քաղաքական ու մշակութային միասնության կարևորությունը:

Այս գաղափարները նա մարմնավորում էր իր հոդվածների հիմնական թեմաներում՝ կրթության խնդիրների, Ազգային վարչության գործունեության քննադատության, եկեղեցու և մամուլի դերի վերլուծության միջոցով: Նրա հրապարակախոսական մոտեցումները առանձնանում էին հավասարակշռությամբ և չափի զգացումով, ինչը թույլ էր տալիս քննարկել հարցերը անաչառ և համապարփակ՝ խուսափելով միակողմանիությունից:

Արփիարյանի հասարակական ներգործությունը պայմանավորված էր նրա քննադատական կեցվածքով, որը ուղղված էր ավանդույթներին հնազանդ և բռնակալությանը համակերպված մարդկանց դեմ:

Արփիարյանի՝ «Հայկակ» ստորագրությամբ թղթակցությունները արտացոլում են XIX դարի վերջի արևմտահայ սոցիալ-քաղաքական ճգնաժամերը և միաժամանակ ցույց են տալիս դրանց հաղթահարման համակարգված գաղափարական մոտեցումները՝ հիմնված ազգային ինքնօգնության, ինքնակազմակերպման և քաղաքացիական պատասխանատվության վրա:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Հովհաննիսյան Ռ.,** 1965, Արևմտահայ ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70-80-ական թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 386 էջ: *(**Hovhannisyan R.** 1965, Arevmtehay azatagirakan sharzhumnery yev Karini «Pashtpan hayrenyats» kazmakerputyuny (XIX d. 70–80-akan tt.), Yerevan, HSSRA GA hrat., 386 ej.) **Hovhannisian R.,** 1965. Western Armenian Liberation Movements and the Karin "Defenders of the Fatherland" Organization (1870s–1880s). Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 386 pp. (in Armenian).*

**Լէօ,** 1915, Հայկական հարցի վավերագիրը, Թիֆլիս, Ն. Աղանեանցի հրատ., 400 էջ: *(**Leo,** 1915, Haykakan khntsi vaveragiry, Tiflis, N. Aghanyantsi hrat., 400 ej). **Leo,** 1915. The Documentary Record of the Armenian Question. Tiflis: N. Aghaniants Publishing House, 400 pp. (in Armenian).*

**Լէօ,** 1905, Գրիգոր Արծրունի, հ. 3, Թիֆլիս, Գ. Տէր-Մարգարեանցի հրատ., 496 էջ: *(**Leo,** 1905, Grigor Artsruni, h. 3, Tiflis, G. Ter-Margaryantsi hrat., 496 ej). **Leo,** 1905. Grigor Artsruni. Vol. 3. Tiflis: G. Ter-Margaryants Publishing House, 496 pp. (in Armenian).*

**Համբարյան Ա.,** 1990, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, «Հայաստան» հրատ., 480 էջ: *(**Hambaryan A.** 1990, Hay hasarakakan qaghaqakan mitqy arevmtehayutyan azatagryan ughinery masin, Yerevan, «Hayastan» hrat., 480 ej). **Hambaryan A.** 1990. Armenian Socio-Political Thought on the Paths to the Liberation of Western Armenians. Yerevan: "Hayastan" Publishing House, 480 pp. (in Armenian).*

**Խառատյան Ա.,** 2021, Արփիարյանը Մշակի թղթակից, Գեղամ Հովհաննիսյան, Սուրեն Սարգսյան (խմբ.) Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170-ամյակներին նվիրված Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 4: *(**Kharatyan A.** 2021, Arpiaryany "Mshak"-i tghakits, Gegham Hovhannisyan, Suren Sargsyan (khmb.) Verakazmyal Hnchakyan kusaktsutyan steghtsman 125 yev Arpiar Arpiaryani tsnvndyan 170-amyaknerin nvirvats Mijazgayin gitazhoghovi nyuterii zhoghovatsu, Yerevan, HH GAA patmutyan instituty, ej 4). **Kharatyan A.,** 2021. Arpiarian as a Correspondent of "Mshak". In: Gegham Hovhannisyan and Suren Sargsyan (eds.), Proceedings of the International Conference*

*Dedicated to the 125th Anniversary of the Founding of the Reorganized Hunchakian Party and the 170th Anniversary of the Birth of Arpiar Arpiarian. Yerevan: Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia, p. 4. (in Armenian).*

**Մուրադյան L.,** 1991, Արփիար Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 420 էջ: *(**Muradyan L.,** 1991, Arpiar Arpiaryan, kyanky yev steghtsagortsutyuny, Yerevan, HH GAA hrat., ej 420). **Muradyan L.,** 1991. Arpiar Arpiarian: Life and Work. Yerevan: Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, p. 420. (in Armenian).*

**Սողոմոնյան Գ.,** Արփիար Արփիարյանը՝ «Մշակ»-ի թղթակից, Pan-Armenian Digital Library *(Soghomonyan G., Arpiar Arpiaryany «Mshak»-i tghakits, Արփիար Արփիարյանը՝ «Մշակ»-ի թղթակից - Pan-Armenian Digital Library): Soghomonyan G., Arpiarian as a Correspondent of "Mshak". Արփիար Արփիարյանը՝ «Մշակ»-ի թղթակից - Pan-Armenian Digital Library (in Armenian).*

**«Մշակ»,** N 206, 29.11.1878, «Մշակ», N 1, 16.01.1879, «Մշակ», N 69, 9.05.1879, «Մշակ», N 28, 22.02.1880: «Մշակ», N 71, 12.05.1879, «Մշակ», N 196, 14.11.1878, «Մշակ», N 196, 14.11.1878, «Մշակ», N 17, 7.02.1879, «Մշակ», «Մշակ», N 63, 1.05.1879, «Մշակ», N 193, 9.11.1878, «Մշակ», N 33, 6.03.1879, «Մշակ», N 2, 17.01.1879, «Մշակ», N 71, 12.05.1879, «Մշակ», N 77, 23.05.1879, «Մշակ», N 78, 24.05.1879, «Մշակ», N 81, 29.05.1879: *(«Mshak», N 206, 29.11.1878, «Mshak», N 1, 16.01.1879, «Mshak», N 69, 9.05.1879, «Mshak», N 28, 22.02.1880: «Mshak», N 71, 12.05.1879, «Mshak», N 196, 14.11.1878, «Mshak», N 196, 14.11.1878, «Mshak», N 17, 7.02.1879, «Mshak», N 63, 1.05.1879, «Mshak», N 193, 9.11.1878, «Mshak», N 33, 6.03.1879, «Mshak», N 2, 17.01.1879, «Mshak», N 71, 12.05.1879, «Mshak», N 77, 23.05.1879, «Mshak», N 78, 24.05.1879, «Mshak», N 81, 29.05.1879) (in Armenian).*

**NARINE HARUTYUNYAN**

*Institute of History NAS RA*

Harutyunyannarine899@gmail.com

0009-0006-2073-1283

## ARPIARYAN–HAYKAK IN THE PAGES OF "MSHAK"

Summary

Arpiar Arpiaryan's journalistic and publicistic activity is closely aligned with the ideological orientation of "Mshak". It is therefore not coincidental that he joined the newspaper at the invitation of Grigor Artsruni and upon the recommendation of Mkrtich Portugalyan. Following Svachyan and Nalbandyan,

Arpiaryan emerged as a crucial mediating figure between the Western Armenian and Eastern Armenian intelligentsia.

Arpiaryan was the first to provide a comprehensive and systematic account of the activities of the Patriarchate of Constantinople and the Armenian National Assembly. He possesses a distinctive publicistic style and is well versed in the European press and journalistic traditions, through which he introduced a fresh intellectual current into Western Armenian journalism and public discourse. Grigor Artsruni highly valued his talent, highlighting him as a publicist closely connected with the life of the people and capable of articulating their needs. Through his democratic ideas, Arpiaryan also contributed to the dissemination of the ideological programme of “Mshak”.

**Keywords**: *Arpiar Arpiaryan; “Haykak”; “Mshak”; Armenian Question; Armenian reforms; national self-help; educational societies.*